ՀՈՒԼԻՍ ԱՄՍՎԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

04.07.2014 11:05

Հարգելի՝ փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը հրավիրում է մասնակցելու 2014 թվականի հուլիս ամսվա վերապատրաստման դասընթացներին։

Ներկայացված է նաև դասընթացների մասնագիտական ուղղվածության փաթեթ, որի դեպքում Դուք կարող եք գրանցվել ոչ թե առանձին դասընթացների, այլ 3 դասընթացների միասնական փաթեթի համար, ինչով կարող եք սպառել 2014թ. վերապատրաստման պարտադիր կրեդիտները։

Նկատի ունենալով այն, որ ինտենսիվ դասընթացները սկսվել են 2014 թվականի հուլիսի 1-ից, ՀՀ փաստաբանների պալատը 2014 թվականի համար յուրաքանչյուր փաստաբանին, որպես պարտականություն, հաշվեգրելու է վերապատրաստման **12 ակադեմիական ժամ** (փաստաբանն իր ցանկությամբ կարող է 24 ժամը լրացնել)։

Հաշվի առնելով այն, որ հիմնականում աշխատանքային օրվա ավարտին է դասընթացը լինելու, ՀՀ փաստաբանների պալատը տրամադրելու է Ձեզ սուրճ, թեյ և թեթև սնունդ:

Գրանցվելու համար կարող եք էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկել ani.gharibyan@advocates.amէլ. հասցեին՝ նշելով Ձեր արտոնագրի համարը և հեռախոսահամարը:

Հ.Գ. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/6-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանների վերապատրաստման դասընթացներ անցնելու ժամաքանակի և կարգի համաձայն՝ Փաստաբանի վարքագծի կանոնները (դեոնթոլոգիա)» թեմայով դասընթացների առնվազն 3 ժամ մասնակցությունը պարտադիր է:
(http://advocates.am//images/palati_xorhrdi_voroshumner/Voroshum-xorh-3-6-karg-verapatrastum.pdf)

Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատի

վերապատրաստման հարցերով համակարգող՝

Անի Ղարիբյան

ani.gharibyan@advocates.am

+37410 600 704

Բեռնել ժամանակացույցը

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })